№ 13 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2 **1895** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2 № 13

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ **1895** ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ Արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդ իրաւունքը չունէք. Մամուլի կարծիքը հայոց հարցի մասին. Թիւրքաց հայերի հարցը. Թիւրքաց բանտերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական «Հօդաներ». Նամակ Բագուից. Նամակ Բաթումից. Նամակ Ղզլարից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Յունաց նոր պատրիարքը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՅԴ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՉՈՒՆԷՔ

Մեր առաջ դրած է երկու միմեանց հակառակ, միմեանցից բոլորովին տարբեր, նոյն իսկ միմեանց անհաշտ թշնամի ուղղութիւն.—մէկի ներկայացուցիչն է Ներսէս Վարժապետեան, միւսինը՝ Աշըգեան։

Կ. Պոլսի հայոց մամուլը, ինտելիգենցիան, հոգեւորականութիւնը, և նոյն իսկ հայոց հասարակութիւնը պատկանում է այդ երկու ուղղութիւններից մէկին կամ միւսին.—կամ մէկը կամ միւսը։ Միջին ճանապարհ չը կայ։

Երբ Աշըգեան, հասարակաց կարծիքի բուռն ազդեցութեան տակ, դէմ դրվեց և նրա տեղը, Թիւրքաց կառավարութեան ցանկութեան համեմատ, տեղապահ կարգվեց Հմայեակ Դիմաքսեան, հասարակութիւնը անհամբեր սպասում էր, թէ նա օ՞ր ուղղութեան կը յարի, Վարժապետեանի՞, թէ Աշըգեանի. և երբ նա իր երկչոտ, սարկական քաղաքականութեամբ յարեց Աշըգեանի ուղղութեան, նոյն հասարակաց կարծիքը նրան էլ դէմ դրեց։

Իզմիրլեան եպիսկոպոսը այդ լաւ հասկացաւ, և պատրիարք նստելու օրից իրան յայտարարեց հետեւող Ներսէս Վարժապետեանի ուղղութեան և անհաշտ թշնամի Աշըգեանի և Դիմաքսեանի ընթացքին և նրանց սարկական քաղաքականութեան։

Կ. Պոլսում, նոյն իսկ ամբողջ Թիւրքաց Հայաստանում չէք գտնի մի հատ լրագիր, մի հատ փոքր ի շատէ օրինաւոր մարդ, նոյն իսկ մի հատ „էֆէնդի“, որ այնքան ագիտիստ, թող փչող և բարոյապէս փչացած լինէր, որ միաժամանակ համակրէր և՛ Աշըգեանին և՛ Իզմիրլեանին, որ միաժամանակ ծափահարէր այդ երկու միմեանցից տարբեր անձանց ուղղութեան, մտքերին և գործերին։

Սակայն այն, ինչ որ չը կայ նոյն իսկ Կ. Պոլսի վարձկան, սարսուռ մամուլի մէջ, այդ բանը մենք տեսնում ենք Թիֆլիսի հայոց ողորմելի, որ և է որոշ համոզմունքից զուրկ խաւարամիտ թերթերի մէջ։

Եւ ճշմարիտ, խաւարամիտ մամուլի նոյն էջերում, որտեղ երէկ փառաբանվում էր Աշըգեան, որտեղ երէկ երկինք էին բարձրացնում Աշըգեանի „խոհեմ“, „հաշտ“ ընթացքը, այսօր նոյն էջերում համակրութիւն են ցոյց տալիս Իզմիրլեանի գործերին, նրա բռնած ընթացքին, նրա արտասանած ճառերին։

Որի՞ն հաւատանք։

Երէկ, այդ նոյն ընկած թերթերը փառաբանելով Աշըգեանին՝ նոյն իսկ կաթողիկոսական թեկնածու էին առաջարկում. երէկ այդ նոյն արատաւորված էջերում գովասանքներ էին թափում Դիմաքսեանի նման մի անարժան մարդու վրա. իսկ այսօր այդ նոյն էջերում համակրութիւն են ցոյց տալիս Ներսէս Վարժապետեանի հետեւողին, Իզմիրլեան պատրիարքին։

Որի՞ն հաւատանք։

Վերջապէս, մի քանի օր, մի քանի ամիս, մի քանի տարի առաջ այդ նոյն էջերում գովաբանում էին այն պատրիարքարանը, որի գործերը գանվում էին վարձկան Նուբեանների, Մազսուտների ձեռքում. այսօր այդ նոյն էջերից շանթեր են արձակում նոյն Մազսուտների, նոյն Նուբեանների դէմ, գովաբանելով այն ուղղութիւնը, որը միշտ ատել են, միշտ հալածել, միշտ վնասակար համարել։

Որի՞ն հաւատանք։

Եւ եթէ հայ հասարակութիւնը մի րոպէ, մի ժամ, մի օր հաւատար այդ տեսակ անգոյն, ողորմելի թերթերին, նա վաղուց պէտք է անէծք թափէր Ներսէս Վարժապետեանի և դրան հետեւողների՝ Իզմիրլեանի, Ալէքսիանի գլխին, և երկինք բարձրացներ Աշըգեաններին ու Դիմաքսեաններին, և դրանց այնպիսի հետեւողներին, ինչպէս են Լեէրնէի Մեսրոպ եպիսկոպոսները, Վանի Պողոս եպիսկոպոսները և tutti quanti...

Աշըգեանին գովաբանողը, Դիմաքսեանին պաշտպանողը իրաւունք չունի ոչ Իզմիրլեանին պաշտպանել և ոչ էլ Ներսէս Վարժապետեանին գովաբանել։

Hand off.

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ռուսաց ամսագիրներից մինչև այժմ միայն երկու ամսագիր յայտնեցին իրանց կարծիքը հայոց հարցի մասին։ Դրանցից մէկը, այն է „Русская Мысль“, որի յօդուածը տպագրեցինք „Մշակի“ էջերում, այն միտքն է յայտնում, որ պէտք է լուրջ ուշք դարձնել Թիւրքաց հայերի վրա, և բարւոքել նրանց վիճակը։ Միւսը՝ այն է „Русское Богатство“, ցաւ յայտնելով, որ Թիւրքաց հայերը ենթակայ են արտասովոր և անտանելի զրկանքների, այն կարծիքն է յայտնում, որ Ռուսաստանը ներքին շատ գործեր ունի անելու, ուստի և ցանկալի չէ համարում, որ Ռուսաստանը միջամտի Թիւրքաց հայերի, կամ ուրիշ խօսքերով, արևելեան հարցի մէջ։ Միւս ռուս ամսագիրները հայոց հարցի առիթով դեռ իրանց կարծիքը չեն յայտնել։

Անգլիական „Manchester Courrier“ լրագիրը, խօսելով քննիչ յանձնաժողովի մասին, այն միտքն է յայտնում, որ չէ կարելի յոյս դնել այդ յանձնաժողովի վրա։ Թիւրքաց կառավարութիւնը ամեն բան ուրիշ գոյնով ցոյց կը տայ։ Լրագիրը իր յօդուածը վերջացնում է հետեւեալ խօսքերով։ „Եւ ինչպէս կարող է որ և է յոյս լինել այն մասին, թէ յանձնաժողովը արդարութեամբ կը կատարի իր գործը, երբ վերջին 25 տարվայ ընթացքում երկու այդպիսի յանձնաժողովներ են եղել նշանակված քննութիւն կատարելու համանման կոտորածների համար, և երկուսն էլ ճիշդ մի և նոյն եղանակով ամենախայտառակ կերպով արդարացրել են յանցաւորներին,—մէկը Սիրիայի կոտորածների ժամանակ, 1860 թուին, իսկ միւսը Բոլգարիայի „սարսափների“ ժամանակ, 1875 թուին“։

Ֆրանսիական լրագիրները լսել են, որ Անգլիայի մօտ տեղի են ունեցել նոր „սարսափներ“, Թիւրքերի ձեռքով, ընդդէմ քրիստոնեաների։

„Le Signal“ լրագրի դեկտեմբերի 27-ի համարում տպագրված է մի գեղեցիկ յօդուած Թիւրքաց հայերի մասին։ Յօդուածագիրը մատնանիշ անելով այն բանի վրա, թէ ինչպէս միշտ Թիւրքաց հայերի ազատութեան հարցը միայն դատարկ խօսքեր են մնացել, վերջացնում է հետեւեալ խօսքերով. „Ինչ են արել 1878 թուականից յետոյ Հայաստանում՝ հայերի վիճակը բարւոքելու համար։ Ոչինչ, բոլորովին ոչինչ։ Իսկապէս նրանց հալածում են աւելի սաստիկ կերպով։ Մի-մի անգամ լսվում են պաշտպանութեան ձայներ, ճառեր են խօսում, ոգևորվում են, և յետոյ էլի նորից տիրում է լռութիւն։ Մի քանի ժամանակից յետոյ կը սկսվեն նոր սարսափներ, էլի կը լսվեն նոյն դատարկ բողոքները և նոյն անպտուղ ոգևորութիւնը, մինչև որ Հայաստանում չի մնայ և ոչ մի հայ“։ Յօդուածագիրն է Նորայր Բիւզանդ։

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԸ

«Թիֆլիսի վալիի պաշտօնանկ անելը առաջին լուրջ քայլն է, որ անում է Բ. Դուռը հայկական հարցի առիթով կազմված միջազգային քննիչ յանձնաժողովի ստիպմամբ։ Բայց այդ միայն գործի սկիզբն է, իսկ ապագայ լուծումը դեռ անյայտ է մնում։ Միայն մի բան կարելի է ասել, որ մինչև այժմ եւրոպական մեծ պետութիւնների անհամաձայնութիւնից այնքան ճարպիկ կերպով օգտվող Թիւրք դիպլոմատիան, որ այս անգամ ես կարծում էր, թէ այդ պետութիւնները կաշխատեն quand-même խաղաղութիւն պահպանել և այնքան էլ ուշադրութիւն չեն դարձնի հայկական հարցի վրա, սխալվեց իր հաշիւների մէջ։

Երբ, աշնանը, առաջին լուրերը տարածվեցին Թիւրք զօրքի և քիւրդերի ձեռքով Սասունում եղած կոտորածի մասին, Դուռը ուշադրութիւն չը դարձրեց։ Բայց երբ սկսեցին երևալ եւրոպական լրագիրների մէջ Վանի լճի եղերքին տեղի ունեցած դէպքերի մասին ճշգրիտ տեղեկութիւններ, և եւրոպական հասարակական կարծիքը չը կարողացաւ զսպել դէպի հարստահարված հայերը իր ակամայ ծագող համակրութիւնը, Դուռը հարկաւոր համարեց իր լռութիւնը խղել և յայտնել, որ ոչ թէ քիւրդերն են կողոպտում և սպանում հայերին, այլ հայերը քիւրդերին։

«Այդ անակնկալ պատասխանի տպաւորութիւնը շատ աննպաստ եղաւ Բ. Դրան համար և նա ստիպվեց դէթ ըստ երևոյթին գործել։ Նշանակվեց քննիչ յանձնաժողով, հրաւիրվեցին պետութիւնների ներկայացուցիչները։ Դուռը համոզված էր, որ հայկական սարսափի անանցանելի ձիւները և Թիւրք բիւրօկրատիայի փորձված ընդունակութիւնը «սատցնելու» ամենահրատապ խնդիրները, կարող կը լինեն սատցնել Եւրոպայի հետաքրքրութիւնը դէպի հայոց հարցը։ Բայց առ այժմ այդ յոյսերը չեն իրականանում և գուցէ քննիչ յանձնաժողովին աջողվի երևան հանել Թիւրք բէժիմի պատահական և խրոնիկական պակասութիւնները։»

Ապա Թղթակիցը խօսելով Իզմիրլեանի ընտրութեան և նրա բռնած համակրելի ընթացքի ու ազդու գործունէութեան մասին և համեմատելով այժմեան պատրիարքի գործունէութիւնը նախկին պատրիարք Աշըգեանի վախկոտ, սարկական և թուլամտի գործունէութեան հետ, աւելացնում է.

«Հռչակաւոր Ներսէս պատրիարքից յետոյ սուլթանը առաջին անգամ տեսաւ իր առաջ մի անկուն պաշտպան իր հօտի, մի հովիւ, որը յարգալից, բայց հաստատ խօսքերով պահանջում է իրաւունք և արդարադատութիւն։ Այդ տեսակ վարմունքի համար առաջվայ ժամանակները պատրիարքը ստիպված կը լինէր աքսոր գնալ մի խուլ վանք, բայց այժմ, տիրող տրամադրութեան պատճառով, պատրիարքը մնաց ողջ և առողջ։

«Դժուար է, ի հարկէ, նախագուշակել հայկական հարցի ապագայ զարգացումը, բայց եթէ մեծ պետութիւնների մէջ եղած համաձայնութիւնը չը քանդվի Թիւրք դիպլոմատիայի որ և է մի ճարպիկ խաղով, գուցէ այն ժամանակ այդ հարցը փոքր ի շատէ տանելի լուծում ստանայ, որը կարողանայ գոհացնել և մարդասիրութեան պահանջները և խաղաղասիրութեան շահերը, որի համար խիստ ցանկալի է խաղաղութեան տեսակէտից այդ խրոնիկական և վտանգաւոր հիւանդութեան վերացնելը։»

«Русскія Вѣдомости»

ԹԻՒՐՔԱՑ ԲԱՆՏԵՐԸ

Մեր թղթակիցը, ականատեսի պատմածից քաղելով, հաղորդում է մեզ հետեւեալ տեղեկութիւնները.

«Այս օրերս առիթ ունեցայ տեսնել Թիւրքաց Հայաստանցի մի պանդուխտ, որը քիչ առաջ բանտարկված է եղել Կ. Պոլսի բանտում։ 1894 թուի դեկտեմբեր ամսում Կ. Պոլսից նրան, իր մի քանի ընկերների հետ, փոխադրում են Դիարբէքիր։ Ճանապարհին, դեռ Խնուսի բերդին չը մոտեցած, բանտարկեալը կաշառում է իրան տանող պահապան պաշտօնեաներին և փախչում է իրանց գիւղը, Խնուս, որտեղ մի քանի օր մնալով՝ դուրս է գալիս և ճանապարհ ընկնում դէպի Կովկաս, որովհետև այլ ևս նրա համար անհնար է լինում ապրել հայրենի երկրում։

«Կ. Պոլսում նա բանտարկված է եղել բոլորովին անմեղ տեղը, մի հասարակ կասկածանքի պատճառով։ Բանտում նա մնացել է ընդամենը վեց ամիս, և այդ վեց ամսվայ ընթացքում գործ են դրվել նրա վրա այն բոլոր անգութ արարքները, ինչ որ կարող է ստեղծել մի վայրենի կառավարութիւն։ Այդ մարդու կերպարանքը խիստ ծանր տպաւորութիւն է թողնում մարդու վրա։ Ամբողջ օրգանիզմը հիւծված է, կարծես ոսկորները հալվել են մարմնի մէջ։

«Ահա թէ ինչ տեղեկութիւններ տուեց նա մեզ այն բանտի մասին, որի սարսափները անձամբ ճաշակել էր. «Իմ սենեակը, ասում էր նա, մինն էր բանտի չինութեան մէջ գտնված այն հարիւրաւոր փոքրիկ սենեակներից, որոնց մէջ գիշեր-ցերեկ թագաւորում է մշտական խաւարը. ոչ մի լոյս, արևի ոչ մի ճառագայթ չէր կարող թափանցել այդ թանձր խաւարի մէջ։ Իմ բանտիս պատերի մէջ միակ անցքը ներկայացնում էր ծանր կողպէքներով փակած մի վերին ատիճանի փոքրիկ դուռ, որի միջով ես հաղիւ էի կարողանում դուրս գալ և ներս մտնել այն ժամանակ, երբ Թիւրքաց զափթիները իրաքանչիւր 12 ժամը մի անգամ, հայհոյանք թափելով գլխիս՝ հանում էին և բանտի մութ միջանցքով տանում դէպի արտաքնոց։

«Իմ բանտն այնքան նեղ էր, որ ես մենակ հաղիւ էի կարողանում տեղաւորվել նրա մէջ. նաւելի չուտ նման էր մի չան ընի։ Առաստաղը սաստիկ մօտ էր յատակին, այնպէս որ, առանց կռանալու ազատ չէի կարողանում կանգնել, իսկ պառկած ժամանակ, ի հարկէ, նամ գեանին, ոտ-

քերս պէտք է ծալէի, որովհետև տեղ չը կար մեկնելու։ Վիզս ու ոտքերս շղթայած էին. վզիս շղթայի ծանրութիւնը 15 ֆունտ էր, իսկ ոտքերիս շղթաները, որոնց ես հազիւ էի կարողանում շարժել՝ 30 ֆունտ ծանրութիւն ունէին։ Ամբողջ 24 ժամվայ ընթացքում մի քիչ ջրի հետ ինձ տալիս էին ուտելու 2¼ ֆունտ վատ հաց, իսկ իրաքանչիւր դիշերվայ ժամի 12-ին մի լաւ քնոթակ, ծեծ»։

Էլ—էն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ՀՕԴԱՆԵՐԸ»

Ամբողջ ձմեռվայ ընթացքում մեր գիւղական ժողովուրդը ոչինչ պարապմունք չունենալով, սովորաբար խմբվում է «Թովլի-հօդանները», որոնք գոյութիւն ունեն գիւղերում իբրև համայնական ժողովարաններ, որտեղ գիւղացիները իրանց թանգագին ժամանակը սպանում են առածներով, հեքիաթներով և առասպելաբանութեամբ...

Ամեն օր, երեկոյեան 6—7 ժամին, հաւաքվելով այդ հոտած, նեխված զոմերում՝ գիւղացիները սկսում են առասպելներ պատմել, դատարկաբանել մինչև ուշ գիշերը, նոյն իսկ մինչև լուսադէմին և ապա ցրվում են իրանց տները, որտեղ մի քիչ քնելուց և հանգստանալուց յետոյ՝ դարձեալ միւս օր խմբվում են սովորական ժողովարանը զրախօսելու... Նոանք այդտեղ իրանց առասպելական առածներում և հեքիաթներում ներկայացնում են զանազան «հուրի-փէրիներին», «վիշապներին», «հրեղէն էակներին», «փահլէվաններին» և այլ այդպիսի հրէշաւոր տիպերին, իրանց անբարոյական արարքներով հանդերձ։ Ժողովրդական ոչ մի առած, ոչ մի հեքիաթ, որը կենդանի խօսքով է լսվում ժողովրդի բերանից, իր առանձին հետաքրքրութիւնը չի ունենայ գիւղական համայնքների շրջաններում, եթէ իր մէջ չի բովանդակի անբարոյական տիպեր ու դարձուածքներ...

Այդ հրէշաւոր պատմութիւնները լսում են ոչ միայն հասակաւոր մարդիկ, այլ և այդ առասպելաբանութեանը ունկնդիր են լինում նաև պատանիները և մինչև իսկ փոքրիկ 6—7 տարեկան տղաներ և աղջիկներ, որոնք, մանաւանդ վերջինները, լսելով այդ զարհուրելի առածների պարունակութիւնը՝ անմոռանալի կերպով տպաւորում են իրանց մատաղ մտքի մէջ...

Ոչ միայն երիտասարդներն ու պատանիները, այլ նոյն իսկ հասակաւոր մարդիկներից շատերը սոսկում փչաքաղվում են ժողովրդական այդպիսի առասպելական առածները լսելով, որոնք իրանց սարսափելի իմաստով տարօրինակ ազդեցութեան տակ են դնում լսողին...

Իրաքանչիւր գիւղական ժողովարան, որ կազմում է մի որ և է ունեոր գիւղացու «Թովլիհօդան», ունի իր յատուկ առածախօսները, իր առանձին առասպելաբանողները, որոնք ամբողջ ժամերով, մէկը միւսի յետեից՝ ծուռ ու չիտակ՝ սկսում են իրանց առասպելական պատմութիւնը, որը ոչ մի բարերար ազդեցութիւն չէ ունենում գիւղական ժողովրդի վրա...

Ի՞նչպէս պէտք է դրա առաջը առնել։

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յունվարի 30-ին

Ձեզ արդէն հեռագրվեց, որ կատաղի հրդեհը լափեց Բ։ ալանթալօվի պասաժ կոչված առևտրական շինութիւնը։ Ահա չտապում ենք հաղորդել մանրամասնութիւնները։

Երեկոյեան ժամը 5½-ն էր, երբ կայծակի արագութեամբ քաղաքում լուր տարածվեց, թէ «պասաժը» այրվում է։ Շառագունած երկինքը վկայում էր վերևից և վաւերացնում լուրը։ Մի քանի րոպէի մէջ հետաքրքրված ամբոխը ոտով ու կառքերով խռնվեց պասաժի շուրջը և ինչ տեսարան... Պասաժը՝ քաղաքի զարդը, ամենալաւ մագազինների այդ գեղեցիկ շարքը՝ ամբողջովին կլանված էր կրակի բոցերի մէջ. կատաղի կրակը անխնայ կերպով լափում էր ամեն ինչ, կարծէք վճռած լինելով ոչ մի բան ողջ չը թողնել. ապակիների ճաճատումը, գոնների ճայթիւնը աւելի սարսափելի էին դարձնում այդ տեսարանը։ Հրդեհը այնպէս արագ կերպով տարածվեց պասաժի մի ծայրից միւս ծայրը, որ համեմատաբար շատ քիչ բան կարողացան ազատել, այն էլ միայն ներքևի յարկի ծայրի մագազիններից։ Վնասը 1,000,000-ից աւելի են կարծում։

Եւ այդ վիթխարի հրդեհը հանգցնելու էր եկել դարձեալ Բագուի հրդեհաշէջների ողորմելի խումբը, որը միայն ծիծաղ էր յարուցանում ժողովրդի մէջ, ուրիշ ոչինչ. ինչ կատակ. ահագին շինութիւն է այրվում և ահա երկու կառք՝ վեցվեց մարդկանցով, ահագին հարայ հրոցով եկան, կանգ առան և երկու պզտիկ տակառներ ուղարկեցին, որ ջուր լցնեն, բերեն, յետոյ այդ տակառներից սրսկեն, որպէս զի հրդեհ հանգցնեն։ Քանի է տակառների թիւը—3—4. ինչ բովանդակութեամբ իւրաքանչիւրը—10—15 վեդրանոց. կատակ չէ, խայտառակութիւն չէ, հապա ինչ է։ Եւ այդ ոռտեղ, Բագուի նման մի քաղաքում... հրդեհը այնքան մօտիկ էր ծովին, և չը կարողացան մի կարգին ջրմուղ բերել, միացնել ծովի հետ և ջուր հանել։

Եւ մթթէ այդպիսի մի ահագին շինութիւն ինքը չը պէտք է ունենար իր պատրաստութիւնը։ Անկասկած, եթէ այդ լինէր, այն ժամանակ հեշտութեամբ կարելի կը լինէր այդ ահագին վնասից ազատ մնալ։

Պասաժը այրվում է դեռ այս րոպէիս էլ, երբ գրում ենք այս տողերը։ Ժամի 9-ն է, ուրեմն 3 ժամից աւելի է, որ այրվում է և դեռ չարունակվում է այրվել։ Պասաժին կպած է արքունական բանկը, որը կարող էր շատ հեշտութեամբ այրվել. սակայն զինուորների բոլոր ջանք ու ճիգն էր ազատ պահել բանկը, որը և աջողվեց։ Արդեօք այս դառն խրատից յետոյ գոնէ քաղաքային վարչութիւնը լուրջ ուշադրութիւն կը դարձնի այդ տեսակ դժբաղդ դէպքերի դէմ նախազգուշութիւնների ձեռնարկելու։

Երէկ երեկոյեան կրակ ընկաւ մի ուրիշ տուն, այն է Մալխասեանների տունը. հրդեհաշէջների խումբը այն ժամանակ եկաւ, երբ ամբողջ տունը արդէն կրակի մէջ էր։

Ստ. Տէրեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Յունվարի 19-ին

Կայ արդեօք մի ուրիշ քաղաք, որտեղ հայոց դպրոցը աւելի վատ դրութեան մէջ լինի, քան Բաթումում։ Այս հարցը գուցէ շատերին տարօրինակ և անհաւատալի երևայ, որովհետև ամենքն էլ անկասկած լսել են, որ Բաթումը մեր վաճառաշահ քաղաքներից մէկն է, որ այդ վաճառաշահ քաղաքում հաղարաւոր հայեր շահվել են և շահվում են, որ նրանցից շատերը տասնեակ և նոյն իսկ հարիւր հաղարների տէր մարդիկ են։ Այս բոլորը, կրկնում ենք, ամենքը լսած կը լինեն և, ի հարկէ, չեն հաւատայ, եթէ ասենք, որ այդ քաղաքում մի թշուառ ծխական դպրոց կայ, ապահովութիւնից իսպառ զուրկ, մինչդեռ դպրոցի ապահովութիւնը տարեկան 1000—2000 րուբլի է միայն պահանջում։ Այդ ծախսը ծածկելու համար այստեղ սովորապէս դիմում են այն միջոցներին, որոնք գործադրվում են ուրիշ քաղաքներում զանազան բարեգործական նպատակների համար,—թատրոնական ներկայացումներին, ժողովարարութիւններին, Ծննդեան երեկոյեան աւանդական «Աւետիսին» և այլն։ Այդ միջոցները աւելի յարմար են պատահական բարեգործութիւնների համար, որոնց թւում յամենայն դէպս չէ կարելի հաշուել մեր ուսումնարանները։

Ամօթ է բաթումցիներին չապահովել դպրոցը, մանաւանդ որ այդ ապահովութեան համար չնչին գումար է հարկաւոր։ Եթէ մի հազար րուբլի մշտական ունենայ դպրոցը, մնացածը եկեղեցին կը տայ և կարիք չի լինի ամենայն տարի մի քանի անգամ մուրացկանութեան դիմել և հազար ու մի նեղութիւններ ու հեգնութիւններ տանել։

Պէտք է զարմանալ այն մարդկանց տոկունութեան վրա, որ չը նայած այդ պայմաններին, միշտ սիրով աշխատում են աջակցել ուսումնարանական գործին. այդ բանի մէջ ամենից շատ շնորհակալութեան արժանի են, ի հարկէ, մեր նոր հոգաբարձուները և հոգաբարձուհիները, որոնց շնորհիւ այս տարի բաւական կանոնաւորվեց մեր ուսումնարանը։ Երբէք հոգաբարձուները այստեղ այդպէս սիրով չեն վերաբերվել դէպի դպրոցը, ինչպէս այս տարի մեր հոգաբարձուհիները, տիկիններ Ան. Յովհաննիսեանը և Հռ. Խաչատրեանը։

Այս երևոյթը շատ ուրախալի է. նա ապացուցանում է, որ հայ կինը դպրոցական կեանքում շատ օգտակար կարող է լինել և ով գիտէ, գուցէ մեզ էլ վիճակված է ապագայում, ամերիկացիների նման, դպրոցները ամբողջապէս յանձնել մեր կանանց։ Յամենայն դէպս, ժամանակ է այդ ապարիզում կանանց աւելի միջոց տալ գործելու։

***

ՆԱՄԱԿ ԴԶԼԱՐԻՑ

—

Յունվարի 25-ին

Մօտ երկու ամիս նիստեր ունենալուց յետոյ, այստեղի այգետէրերից ընտրված յանձնաժողովը, որը պէտք է մի մանրամասն ծրագիր մշակէր Ղըզլարի գինիները արտահանելու համար, ասիս 18 ին ընդհանուր ժողովի էր հրաւիրել այդ գործներին, քաղաքային վարչութեան դահլիճում։ Առաջին ժողովին միայն վաթսունհինգ մարդ եկան և ներկայ գտնվողները յարմար գտան ժողովը յետաձգել մինչև յունվարի 23-ը, պահանջելով, որ ներկայ գտնվողների թիւը շատ սահմանափակ է։

Ասիս 23-ին վերջապէս կայացաւ ժողովը։ Յանձնաժողովը, որից ազդարարութիւնը վճռական միջոցներ էր ապատում, չարդարացրեց այդ գործների սպասելիքը և ընդհանուր ժողովին, փոխանակ վերջնականապէս կազմակերպած մի ծրագիր ներկայացնելու՝ առաջարկեց նոր մասնաժողովներ ընտրել։

Ընտրվեցան երկու մասնաժողովներ՝ մինը 9 հոգուց բաղկացած, որ գրեթէ չարունակելու է յանձնաժողովի պէս ծրագիրներ կազմել, և միւսը՝ 8 հոգուց բաղկացած, որը ապագայում պէտք է գինիները գնահատէ։ Ընդհանուր ժողովին ներկայ էին 700 այգետէրերից միայն 108 հոգի, սակայն չը նայած սրան, ժողովը պարտաւորական որոշումներ արաւ քաղաքի բոլոր այգետէրերի համար։ Այգետէրերը վճռեցին այս նիստում նախագծված մի քանի կանոնները առաջարկել Թերեքեան շրջանի կառավարչի հաստատութեան և ապա թէ գործադրութիւն տալ նրանց։

Ազդարարութիւնը, որ մի լուրջ և մշակված ծրագրի ակնկալութիւն ունէր յանձնաժողովից՝ հիասթափվեց. իսկ թէ նոր մասնաժողովները կարդարացնեն թէ ոչ հասարակութեան սպասելիքները,—այդ ապագայում կը տեսնենք։

Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունվարի 30 ին

Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը, անցեալ տարվայ սեպտեմբեր ամսից մինչև այս յունվար ամիսը ստացել է հետևեալ նուիրաբերութիւնները.

1) Սեպտեմբերի 14-ին, հանգուցեալ Բաղչի Սարգսեան Եղիազարեանի կտակակատարներից, համաձայն նրա կտակի 2,000 բուբլի, որդեգիր պահելու համար։

2) Հոկտեմբերի 19-ին, Վանքի մայր եկեղեցու միաբան հանգուցեալ Եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեանցի կտակակատարներից՝ չքաւոր աշակերտների օգտին՝ 100 բուբլի։

3) Դեկտեմբերի 14-ին, հանգուցեալ Յովհաննէս Զիթախեանցի ժառանգներից՝ օր. Զիթախեանից և իշխանուհի Բէկթաբէկեանից՝ 1,000 բուբլի, որի գործադրութիւնը յանձնված է հոգաբարձութեան բարեհայեցողութեան։

4) Նոյն ամսի 22-ին, Ա. Մելիք-Ազարեանից, յօգուտ չքաւոր աշակերտների, տօների առիթով, 50 բուբլի։

Հոգաբարձութիւնը այս նուիրաբերութիւնների համար յայտնում է իր շնորհակալութիւնը։

Հերթակալ հոգաբարձու՝

Սամսոն Ցարութիւնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պետերբուրգ, յունվարի 20 ին

Ուսանողական պարտքերն ևս կարծէք սպառնում են մեր հասարակական փոքրագոյն չարիքներից մէկը դառնալ։ Մեր պարբերական մամուլին մշտական հետևողը վերջին ժամանակներս նկատած կը լինի, որ լրագրներում հեղհեղէ լոյս տեսան մի շարք նամակներ Ռուսաստանի զանազան քաղաքների ուսանողների կողմից, որոնցով խնդրում էին նախկին ուսանող-ընկերներին վերադարձնել այն գումարները, որ ուսանողութեան տարիները վերցրել էին իրանցից։

Կրկնվեցան այդ նամակները, նորից և նորից խնդրեցին, սպառնացին աւելի խիստ միջոցների դիմել, նոյն իսկ լրագիրները առաջնորդող յօդուածներ նուիրեցին այդ նիւթին, բայց ինչ հետևանք ունեցաւ այդ բոլորը. համարեա ոչինչ. «ձայն բարբառոյ յանապատի»։

Մոռանալ կարօտող ընկերին, մոռանալ այն տարիները, երբ նրա աղքատիկ գրպանի կօպէկները բաւականութիւն են տուել ընկերոջ անհրաժեշտ կարիքներին և մոռանալ այնպիսի մի ժամանակ, երբ նախկին սուղ ու ճնշված վիճակին փոխարինել է առնուազն օրինաւոր ու ազատ կեանք, նախկին 20—39 րուբլի ամսականներին՝ կանոնաւոր ապրուստի ռոճիկ,—դա աւելի քան տգեղ ու պախարակելի է։ Ինչին վերագրել այդ երևոյթը. սոսկ մոռացութեան, անհոգութեան թէ,—ամենատարրական զգացմունքի բացակայութեան։

Մատնաւորելով խօսքը Պետերբուրգի հայ ուսանողների վրա, պէտք է ասել, որ այս տարի առաջին անգամն է, ինչ նրանք դիմում են նամակներով իրանց նախկին ընկերներին, խնդրելով վերադարձնել վերցրած գումարները։ Բայց դիմել նամակով բոլորին՝ գոնէ առ այժմ անհնար է, որովհետև կայ մի ահագին թիւ նախկին ուսանողների, որոնց ոչ միայն հասցէները յայտնի չեն, այլ նոյն իսկ անունները անյայտ են։

Ուստի և ներկայ նամակի նպատակն է յիշեցնել թէ այդպիսիներին, և թէ առհասարակ նրանց, որոնց գրված են նամակներ, իրանց պարտքերը, խնդրելով, որ ըստ կարելւոյն կարճ ժամանակում վերադարձնեն վերցրած գումարները և տեղիք չը տան կրկին ու կրկին դիմումների և զանազան խիստ միջոցներ ձեռք առնելու։ Նամակագրութեան հասցէ՝ Петербургъ, Екатерининскій каналъ, д. № 81. кв. 29, Іоаннесу Мѣдникянъ.

Յովհ. Մեղնիկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մոսկվա, յունվարի 25-ին

Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով, Մոսկվայի հայ ուսանողութեան կողմից շնորհակալութիւն յայտնել այն անձանց, որոնք հայկական երեկոյթի առիթով նուիրատուութիւն են արել յօգուտ Մոսկվայի չքաւոր հայ ուսանողների։

Ստեփաննոս Մղդեսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Զորեքշաբթի օր հայոց պատրիարք փոխադարձ այցելութեան գընաց Աւստրիոյ-Հունգարիոյ և Իտալիոյ դեսպանատունները։ Յաջորդ օրը, հինգշաբթի, Ամերիկեան Պօրտ ընկերութեան միսիոնարներուն կողմէն «Աւետարեր» շաբաթաթերթի խմբագիր Մըսթըր Պարնըմ, և ամերիկեան Աստուածաշունչի ընկերութեան ներկայացուցիչ Մըսթըր Պլիս, Պատրիարքարան եկան շնորհաւորական այցելութեան պատրիարքին»։

—

Երէկ տեղեկութիւն ստացանք Էրզրումից, որ անգլիական «Daily Telegraph» լրագրի թղթակից Դիլօն հասաւ Էրզրում։

—

Լսում ենք, որ անգլիական «Daily News» լրագրի թղթակից Mackham Տրապիզոնի վրայով ճանապարհ է ընկել Էրզրում, այնտեղից Սասուն գնալու համար։ «Times» լրագրի թղթակից Scudamore Կ. Պոլսից ուղղակի գնացել է Հալէպ։

—

«Աւետարեր» լրագիրը հաղորդում է, որ շուտով պատրաստ կը լինի Աւետարանի քրդերէն թարգմանութիւնը։

—

Լսում ենք, որ հայոց Բարեգործական ընկերութիւնը և Հրատարակչական ընկերութիւնը այս տարի միասին մի պարահանդէս պէտք է տան՝ յօգուտ այդ երկու ընկերութիւնների։ Պարահանդէսը տեղի պէտք է ունենայ փետրվարի 11-ին։

—

Երեքշաբթի, յունվարի 31-ին, տեղի ունեցաւ Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան նիստը, որ զբաղվեց այն հարցով, թէ ինչպէս պէտք է կազմակերպվի չերամապահութեան, բամբակագործութեան և բրինձի մշակութեան

վերաբերեալ հարցերի ուսումնասիրութիւնը։ Նախագահողը նիստի վերջում յայտնեց, որ ընկերութեան անդամները պէտք է սկսեն զբաղվել նոր ընտրութիւնների գործով։ Իրանց պաշտօնավարութեան ժամանակամիջոցը աւարտել են փոխնախագահ Շիմանովսկի, խորհրդի անդամ Տարատինով և քարտուղար Եսսելիանի։

—

Փետրվարի 1-ից, «Մշակի» խմբագրատունը ունի սեփական տելեֆոն։

—

Երկար ժամանակ համարեա գարնանային եղանակ անելուց յետոյ, վերջապէս յունվարի 30-ին ձիւն եկաւ Թիֆլիսում։

—

Մենք ստացանք Կ. Պոլսից հայոց քաղաքական ժողովի վերջին նիստի մանրամասն հաշիւը, որ տպագրված է Կ. Պոլսի լրագիրներում։ Նիստին նախագահում էր Իզմիրլեան պատրիարք։ Այդ ժողովում ընտրվեցին ուսումնական և տնտեսական խորհուրդների անդամներ։ Շուտով տեղի պէտք է ունենայ և դատաստանական խորհրդի ընտրութիւնը։ Բացի դրանից նոյն ժողովում ընտրվեց մի մասնախումբ, որը պէտք է ընթացք տայ վերջին ամիսներում դիզված գործերին։ Կ. Պոլսից մեզ հաղորդում են, որ ընդհանրապէս այդ ընտրութիւնները լաւ տպաւորութիւն են թողել։ «Էֆէնդիների» բանակը, որ վերջին տարիներս տիրապետել էր Կ. Պոլսի հայոց բոլոր գործերին, արդէն դուրս է գցվում, և նրանց տեղ բռնում են նոր, թարմ, անձնուէր, օրինաւոր մարդիկ։ Ցոյս ունենք, որ այդ նոր և օրինաւոր մարդիկ, իրանց գլուխ ունենալով Իզմիրլեանին՝ առաջ կը մղեն թիւրքահայոց գործերը այն ճանապարհով, որը վաղուց խափանված էր Ազրգեանի և Դիմաքսեանի օրերով, և նրանց անարժան ձեռքերով...

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Այստեղ գարնանային եղանակ է անում։ Յունվարի 4-ից սկսած մինչև այսօր երկինքը չէ ամպել։ Ժողովուրդը ջրի կողմից նեղութիւն է կրում»

—

ՄԵՂՐԻ գիւղի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Մեղրիի երկսեռ ուսումնարանի հոգաբարձութիւնը պատիւ ունի հրապարակով յայտնել իր խորին շնորհակալութիւնը հետեւեալ անձանց.—բազու�բնակ տիկին Եղիսաբէթ Սարգսեանցին, որ նուիրեց 1894 թվին 100 ռուբլի ուսումնարանին և այս երկրորդ տարին է, որ տիկինը նուիրում է նոյնաչափ գումար. «Մեղրի» ընկերութեան բազուաբնակ մեղրեցի անդամներին, որոնք նուիրեցէն մի չքեղ վարագոյր ուսումնարանի բեմի համար, և երեւանաբնակ Վարդաղար Պապանեանին, որը նուիրեց ուսումնարանին կէս դիւժին աթոռներ»։

—

ԳՆՁՐԼՈՒ գիւղի հայոց դպրոցի աւագ-ուսուցիչը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Թոյլ տուէք հրապարակով, Գէչրլուի հայոց ուսումնարանի հոգաբարձութեան յանձնարարութեամբ, շնորհակալութիւն մատուցանել այս գիւղացի եղբարք Ահարոնեաններին, որոնք իրանց նորերումս մեռած եղբայր Պողոսի յիշատակին ուսումնարանին նուիրեցին 25 ր., իսկ մի քանի աղքատ աշակերտներին դասագրքեր։ Այս բոլորը փոխանակ քելեխի էր։ Այսպիսով սրանք քելեխը վերացնելու առաջին օրինակը տուին, որը շատ է ճընշում գիւղացիներին»։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐ գաւառի խնձորէսք գիւղից խընդրում են տպել հետեւեալը. «Խնձորէսք գիւղում, տիկին Մարգարիտ Նաղարեանց մահվանից առաջ նուիրեց հայոց երկդասեան ուսումնարանին 170 ռուբլի, որի մասին նոյն դպրոցի հոգաբարձութիւնը և ուսուցիչները պարտք են համարում հրապարակով յայտնել»։

—

ՄԵԾ-ԱՐԽՎԱԼԻ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղի ժողովուրդը համախօսական վճիռ է կայացրել, որ հողը հաւասարապէս բաժանեն։ Ցանկալի էր, որ այդ գեղեցիկ ձեռնարկութեան գլուխ անցած մարդիկ՝ բարեխղճութեամբ ի կատար ածէին այդ օգտաւէտ գործը և սովորական կռիւների ու խառնակութիւնների տեղիք չը տային»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՑ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Հեռագիրը լուր բերեց, որ Կ. Պոլսում տեղի ունեցաւ յունաց նոր պատրիարքի ընտրութիւնը։ «Հայրենիք» լրագիրը այդ մասին հաղորդում է հետեւեալ մանրամասնութիւնը.

«Ընտրողական ժողովի վերջին նիստին ատենագրութեան ընթերցումին ետքը, տեղապահ սրբազանը յայտնեց գումարման նպատակը։

«Ցետոյ ձեռնարկուեցաւ ըստ օրինի պատրիարքական աթոռին երեք ընտրելիներուն ընտրութեան։

«Ընտրուեցան՝

«Նախորդ պատրիարք Եօակիմ։

«Լէրոսի և Գալիմնոսի մետրապոլիտը։

«Տրինոբոլիսի մետրապոլիտը։

«Ինչպէս յայտնի է, Սինոդին անդամները եռանուն ցանկին մէջէն կընտրեն պատրիարքը։ Սինոդին անդամները յետոյ պատրիարքարանի եկեղեցին իջան, ուր տեղապահ սրբազանը կրօնական սովորական արարողութիւնը կատարելէ ետքը, տեղի ունեցաւ պատրիարքական վերջին ընտրութիւնը։ Լէրոսի մետրապոլիտը, Անթիմոս սրբազան, պատրիարք ընտրուեցաւ 9 ձայնով։ Ցետ ընտրութեան, ժողովին անդամները պատրիարքարանին սրահին մէջ գումարուելով՝ ստորագրեցին տ. Անթիմոս պատրիարքին ընտրութեան մազպատան, որ անմիջապէս ղրկուեցաւ դատական և կրօնական գործերու նախարարութեան։

«Ցունաց նոր պատրիարքը ծնած է Եանեա։ Իր ուսումը առած է Հէյպէլիի աստուածաբանական վարժարանին մէջ և 1861-ին Ամէնք գացած է աւարտելու համար իր ուսումը, և հոն տետրակ մը հրատարակած է Յիսուսի աստուածութեան վրա, ընդդէմ Ռընանի։

«Եանեա դառնալով, աստուածաբանութեան ուսուցիչ եղած է այդ քաղաքին մէջ։ Բարամիթիայի եպիսկոպոս ձեռնադրուելով, Էնոսի մետրապոլիտ եղած է, յետոյ Դիոնէսիոս Է. պատրիարքին Անքիալոս ղրկուած է, բայց չէ ընդունած այդ թեմը և Եանեա քաշուեր էր։ Երկու տարի առաջ, Կէօրիւճէի առաջնորդ անուանուեցաւ և, մէկ քանի ամսէ ի վեր, Լէրոս և Գալիմնոս ղրկուած էր»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, յունվարի 24-ին

Մեր անցեալ նամակով հաղորդեցինք թիւրք զինուորականի արած կոտորածը։ Այս նամակով կը շտապենք հաղորդել քանի մը մանրամասներ։

Թիւրք զինուորականը ժամը 1-ին, ձէպէլ փողոցէն անցած ատեն, հատու գործիքով մը կռնակէն զարկաւ 28 տարեկան օրիորդ մը, Մանիկ անուն, որ տուն կը դառնար։

Զինուորականը յետոյ ձէտիտիէ փողոցը մտնելով, հանդիպեցաւ 16 տարեկան աղջկան մը, օրիորդ Եղինէ Արապեան, որ և ճակտին ահռելի հարուած մը տուաւ, ուրիշ հարուած մըն ալ հետեւող սալաթաճին, և ճամբան շարունակեց։ Զոհերուն աղաղակներէն, դրացի նպարավաճառը խանութին առջև ելաւ։ Կատաղի թիւրքը անոր վրա նետուեցաւ և հարուածով մը քիթը կտրեց։

Անկից Մէյլէ փողոցէն անցնելով Բանկալթիի շիտակ ճամբան ելաւ և Եէնիմահալլէ փողոցը մըտաւ։ Այդ միջոցին Լոքսանդրա անուն դերձակուհի մը, Ֆլման վաճառատունէն, քրոջը և բարեկամի մը հետ ճամբէն կերթար։ Մարդը անոնց վրա յարձակեցաւ և աջ ծիծին տակէն հարուած մը տուաւ. խեղճ աղջիկը գետին ինկաւ։

Նոյն փողոցին մէջ տեսաւ երիտասարդ մը, Բոլ Շիշմանեան էֆէնտի, որ տուն կը դառնար։ Անոր վրա յարձակելով, դանակը կոկորդը մխեց, միւս կողմէն դուրս հանելով։

Նշանթաշի մէջ, հանդիպեցաւ Բ. Դրան դիւանատան պաշտօնեաներէն Մաղհար պէյի, և երկու հարուած ալ անոր իջեցուց, մէկը ծոծրակին և միւսը ականջին ետևէն, սխալմամբ քրիստոնեայ կարծելով։

Վախճանեալ Սիւրէյա փաշայի ապարանքին առջև, յարձակեցաւ Թիւնէլի ընկերութեան գանձապետ Պ. Սդուբէի վրա, որուն սրտին ուղղակի հարուած մը իջեցուց. խեղճը ինքը իր վրա դարձաւ և մեռած գետին ինկաւ։ Պ. Սդուբէ ամուսնացած էր և չորս զաւակի հայր։ Ամէն իրիկուն սովորութիւն ունէր այդ կողմերը պտտելու։ Դիակը Այնալը-Զէշմէ հիւանդանոցը փոխադրեցին։ Տիկին Սդուբէ, տեսնելով որ էրիկը կուշանայ, բարեկամ մը ղրկեց լուր առնելու անոր մասին։ Դիւրին է երևակայել անոր սարսափը, երբ լուրը հասաւ։

Զինուորականը ճամբուն վրա վիրաւորեց նաև դէմը ելլող ուրիշ չորս հոգի, հայ մուրացկան մը, գինեպան մը և 6 տարեկան յոյն տղեկ մը։

Վիրաւորուածներէն Բոլ Շիշմանեան երիտասարդը երէկ մեռաւ զերմանական հիւանդանոցին մէջ. ամերիկական հպատակ Սդուբէի, Թիւնէլի գանձապետին յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ երէկ առաւօտ, ի ներկայութեան խուռն բազմութեան, որուն մէջ կը դտնուէին Միացեալ-Նահանգներու դեսպանատան և հիւպատոսարանին պաշտօնեաները, Թիւնէլի տնօրէնութեան պաշտօնեաներ, Գերմանիոյ ընդհանուր հիւպատոս Պ. Ժիլէդ, Գերմանիոյ դեսպանատան առաջին թարգման Պարոն Թէսթա, և այլն։

Վիրաւորեալները իրենց տանը մէջ կը դարմանուին։ Ոմանց վէրքը ծանր է, յոյս չը կայ բըժշկվելու։

Քրիստոնեայ մի քանի թաղեր սարսափի մէջ են։ Լուր կը պտտի որ վերջին դէպքերը, որոնց մասին հաղորդեցինք, պատահական չեն։ Եթէ այսպէս է Պոլիս, ինչ կըլլայ դաւառները։

Պ—ցի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Տրապիզոն, յունվարի 22-ին

Այսօր, քաղաքիս ս. Աստուածածին եկեղեցու մէջ, ի ներկայութեան խուռն բազմութեան, առաջնորդական փոխանորդ Վահան քահանան կարդաց կաթողիկոսական անդրանիկ կոնդակը, որ, ինչպէս յայտնի է, Աչըգեանի վատահոգութեամբ, տարիէն աւելի է թաղուած կը մնար պատրիարքարանի դիւանատան մէջ։

Եկեղեցիին մէջ բաւական լաւ կերգէր՝ վերջին շաբթուս մէջ դպրոցի աշակերտներէ և դուրսի երիտասարդներէ կազմուած նոր խումբը. և երբ քահանան կարդաց առաջին «ողջոյնը», ժողովուրդը սկսաւ որոտընդոստ ծափահարել և «կեցցէ» գոչել, և նոյնպէս երբ կոնդակի ստորագրութիւնը կը կարդացվէր, դարձեալ կեցցէները և ծափահարութիւնները կրկնուեցան։

Առաջնորդը՝ Եղիշէ Ծ. վ. Այվազեան շատ յաջող ու նպատակայարմար քարոզ մը խօսեցաւ, սակայն ցաւով կը յայտնենք, որ ըսածները սըրտէն չէին գար և հակառակ էին իր իսկական գաղափարներուն, և թէև ինքզինքը շատ զգացված ցոյց կուտար, բայց այդ միայն ճիգ մէր՝ մէկ երկու ամսուայ մէջ փչած հովին յարմարելու։

Գիշերային պահապանները աչալրջութեամբ պաշտօնին կը շարունակեն, բայց միայն հայ թաղեցիները անոնց ամսականի համար բան մը չեն վճարած։ Հայ ժողովուրդը պարզ տեսնելով այդ պահապանները պաշտօնի կոչուելուն բուն պատճառները, գովելի արթնութեամբ մը (որ մինչև ցարդ չէր տեսնուած) հաստատ մտադրած է ինչ որ ալ ըլլայ, ինչ բռնութիւն որ գործ դրուի, չը վճարել երբէք պահապանի անունով այդ լրտեսներու, աւազակներու համար որ և է դրամ։

Առաջնորդարանի կողմէ յունվար 20-ին կուսակալին կէսպաշտօնապէս խմաց տրուեցաւ ժողովրդին տրամադրութիւնը։ Կուսակալը ձայն չէ հանած։ Տեսնենք ինչ ելք կունենայ խնդիրը։

Մեզ այնպէս կերևայ թէ կառավարութիւնը, Եւրոպայի մէջ տիրած յուզումէն շփոթած, չի պիտի պնդէ, բայց երբ հայոց խնդիրը իր բաղձացած կերպով մարի, այն ժամանակ պիտի նորից յարձակի հայերուն վրա ամենածանր պահանջներով։

Ցեղ—ցի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռումինիայի «Ռեսբոյիլ» լրագիրը տպել է հետեւեալը դեկտեմբերի 16-ի համարում.

«Ռումինիայի դատական նախարարի առաջարկութեամբ՝ որոշուել է Ռումինիայից արտաքսել Բարաքէվի Սթոյանոֆ և Վարդան Բաբաղեան անուն անձերը։ Սթոյանոֆ պուլկար է։

«Վարդան Բաբաղեան, 29 տարեկան, պարսկահայ մըն է որ պարսկական անցագրով կը ճամբորդէ։ Հաւանաբար Ռուսիա պիտի երթայ կամ ծընէվ պիտի դառնայ, ուսկից եկած էր իր չարագործական ինչ-ինչ նպատակներն ի գործ դնելու համար։

«Բոլոր տէրութիւնք պիտի հարկադրուին խիստ միջոցներ ձեռք առնել այս կարգի անձերուն դէմ և մինչև ցարդ իրենց ցոյց տուած թոյլատուութենէն ետ կենալ, որով Վարդան Բաբաղեանի նման անձերը ոչ մէկ տեղ ապաստանարան պիտի գտնեն»։

*
* *

Կ. Պոլսի բարքերից։ Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Զորեքշաբթի իրիկուն, Կարա-Կէօմրիկի մէջ, մէկ քանի անցորդներ սրտաճմլիկ աղաղակներ լսելով Իսլամ ընտանիքի մը բնակած տունէն, ներս մտան և անռելի տեսարանի մը առջև գտնուեցան. կին մը, վառած ցախաւել մը բռնած, կը չարչարէր իր եօթը տարեկան աղջիկը՝ անոր սրունքները այրելով, գործած մէկ պզտիկ յանցանքը պատժելու համար։ Անցորդները փութացին խեղճ զաւակը ազատել այդ գազան-մօրը ձեռքէն»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Երէկ ներկայացաւ Թագաւոր Կայսրին զերմանական կայսրի պալատի հօֆմարշալ բարոն Էդլօֆշտէյն, որը, զերմանական կայսրի կողմից, հարսանիքին ընծայ է բերել Նոցա Մեծութիւններ Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնային։ Ընծան սեղանի սերվիզ է, որ պատրաստված է Թագաւորական գործարանում, Ֆրիդրիխ Մեծի ժամանակների նմուշների համեմատ։

«Новости» լրագիրը լսել է, որ այն յանձնաժողովը, որ կազմված է գլխաւոր բանտային վարչութեան կից և զբաղված է աքսորի ձևի մշակութեամբ, վերջնականապէս հետեւեալ եզրակացութեան է եկել, թէ պէտք է աքսորը պահպանել միայն արտօնութիւններ ունեցող դասակարգերին պատկանող անձանց համար, սահմանափակելով այդ աքսորը Սիբիրի հիւսիսային ամենահեռաւոր նահանգներով։

«Свѣтъ» լրագիրը լսել է, որ Ռուսաստանի նշանաւոր քաղաքների հաղորդակցութիւնը ռուսաց կուրորտների հետ հեշտացնելու համար՝ արտօնված ճամբակներ՝ 30% զիջումով կը տրվեն և առաջիկայ ամառը։

ՋԷՐՆԻԳՈՎ, 30 յունվարի։ Նահանգական զեմստվոն վճռեց՝ մատուցանել Թագաւոր Կայսրին ամենահպատակ ուղերձ. տալ 60.000 ր. ժողովրդական գրադարաններ բանալու ի յիշատակ Նոցա Մեծութիւնների պսակադրութեան և 5000 ր. տալ Կայսր Ալէքսանդր III-ի արձանի համար, ներել ամենաաղքատ աղգաբնակութեանը 75.000 ր. ապառիկները։

ՏԱՄԲՈՎ, 30 յունվարի։ Բորիսոգլէբի զեմստվոյի ժողովը որոշեց 54.000 ր. 20 նոր դպրոցներ հիմնելու և 44.000 ր. զեմստվոյի զեղատների համար։

ՐՈՍՏՈՎ, (Դոնի վրա), 29 յունվարի։ Դոն գետի վրա այն ատոմեան շատ սառուց է հաւաքվել, որ պայթող նիւթերի միջոցով անգամ կարելի չէ լինում սառուցը կոտրել։ Մի քանի անաջող փորձերից յետոյ, վճռված է սառուցը կոտրել քլունգներով, և դրանով էլ շատ դժուար է։ Վախենում են, որ տխուր հետեւանքներ կարող են լինել նաւերի և չոգենաւերի համար։

ԿԱԶՈՒԻՆ, 29 յունվարի։ Գեներալ Կուրոպատկինի արտակարգ դեսպանութեանը ամբողջ ճանապարհի վրա դիմաւորում են առանձին ուշադրութեամբ, հոգածութեամբ և յարգանքով։ Կայարանների վրա ամենահանդիսաւոր դիմումներ են լինում։ Թեհրան մուտ կը գործի դեսպանը փետրվարի 1-ին։

Կ. ՊՈԼԻՍ, 29 յունվարի։ Այստեղի իշխանութիւնները կարծում են, որ շնորհիւ միջազգային ձեռնարկութիւններին և ցուրտ եղանակին, խուլերան հաղիւ թէ ծանր կերպարանք առնի։

Կ. ՊՈԼԻՍ, 29 յունվարի։ Ուսկէբի բոլգարական եպիսկոպոս Մաքսիմ յետ է կանչված Կ. Պոլիս։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 29 յունվարի։ Սենատոր Ուրէկիա հարցապնդում արեց այն խիստ միջոցների մասին, որ գործ են դրվում Ունգարիայում ռումինական պօստային ծրարների վերաբերմամբ, և այն առիթով, որ այնտեղ արգելվում է ռումինական լրագիրների ստանալը, և պահանջում էր ճնշող միջոցների վերացումն։ Արտաքին գործերի մինիստրը պատասխանեց, թէ Ունգարիան չէ խախտել գոյութիւն ունեցող պայմանագիրը, որ իւրաքանչիւր պետութիւն իրաւունք ունի արգելել արտասահմանեան լրագիրների տարածումը, բռնել հեռագիրներ և բանալ դատաստանական կարգով նամակներ։ Ռումինիան, միշտ ազատամիտ հայեացքներով ղեկավարվելով, չի դիմի ճընշող միջոցներին։ Ուրէկիան ցանկութիւն յայտնեց, որ ունգարական լրագիրները արգելվեն Ռումինիայում այնքան ժամանակ, որքան ժամանակ ռումինական լրագիրները արգելված կը լինեն Ունգարիայում։

ԼՕՆԴՕՆ, 29 յունվարի։ Եապօնացիները տիրեցին Լիուկանդաաս կղզուն։ Վառօդի մագազինը իտաս կղզու վրա օդը թռաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Նիժէգորոդեան դրագունեան գնդի փոխ-գնդապետ պրինց Լիւ-

զօվիկ Նապոլէոնին գնդապետի աստիճան է շնորհված։

Պետերբուրգի նահանգական զէմստվոյի ժողովը որոշից միջնորդութիւն սկսել մարմնական պատիժ վերացնելու այն բոլոր անձանց համար, որոնք ապրում են նահանգում և ենթակայ են վոլոստի դատարանին։

ԼՕՆԴՕՆ, 29 յունվարի։ «Daily News» լրագրի հեռագիրը Կ. Պոլսից հաղորդում է, թէ հրաման է արձակված, որով զէնքի է հրաւիրվում պահեստի զինուորների մեծ թիւ։ Այդ հրամանի պատճառը անյայտ է։

ԼՕՆԴՕՆ, 31 յունվարի։ «Times» լրագրին Պէկինից հեռագրում են, յունվարի 29-ից, որ չինական պատգամաւորներին հեռագրով անսահման լիազօրութիւններ են տրված և հրամայված է վերանորոգել խաղաղութեան մասին բանակցութիւնները։

ՍՕՖԻԱ, 31 յունվարի։ Լրագիրներում տպված նամակի մէջ ցանկով առաջարկում է եռանդով աշխատել՝ Ռուսաստանի հետ հաշտութիւն կայացնելու գործի համար, որովհետև այլապէս Բոլգարիան միշտ կը գտնվի երբեմն պահպանողական և երբեմն Ստամբուլովի ռէժիմի տակ։ Առանց Ռուսաստանի օգնութեան ժողովուրդը և դինաստիան զրկված կը լինեն բոլգարական իդէալները իրագործելու հնարաւորութիւնից։

ՊԱՐԻԶ, 31 յունվարի։ Հանրապետութեան նախագահը ողջոյնի հեռագիր ուղարկեց աւստրիական կայսրին Կապ-Մարտէն, յոյս յայտնելով, որ նրա այնտեղ մնալը նոյնքան բարերար հետևանք կունենայ, ինչպէս և անցեալ տարի։

ԼՕՆԴՕՆ, 31 յունվարի։ Համայնքների ժողովում Բիֆմոնդի դիմաղրական նկատողութիւնը ուղերձի վերաբերմամբ, որով առաջարկում էր արձակել պարլամենտը և թոյլ տալ ընտրողներին կարծիք յայտնել իրլանդական ինքնավարութեան հարցի առիթով, մերժվեց 256 ձայների մեծամասնութեամբ 236-ի դէմ։ Փաքրամասնութիւնը բաղկացած էր պահպանողականներից, ունիոնիստներից և պարնէլականներից։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 31 յունվարի։ Ովկիանոսական «Gascogne» շոգենաւը հասաւ Նիւ-Եօրկ։ Եօթ օր ուշանալու պատճառը նաւի մեխանիզմի փչանալն էր։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 31-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	90 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	40 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	77 »
Ոսկի — — արժէ . .	7 »	40½
Մաքսային կուպոններ — . .	147¾ »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բորսային դիսկոնտ — . .	5 »	7% »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական բէնտա	97 »	50 »
5% ոսկեայ բէնտա 1894 թ. . . .	162 »	— »
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	229 »	50 »
— — երկրորդ —	226 »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա.	101⅞ »	— »
4% Ներքին փոխառութեան . . .	96⅞ »	— »
4½% շրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅜ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	202 »	25 »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101⅝ »	— »
4½% գրաւական թղթեր կալուա».	— »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	152 »	50 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101⅓ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100⅝ »	— »
Օդէսայի — —	100⅜ »	— »
Թիֆլիսի — —	— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	98 »	25 »
— — Քութայիսի — .	99 »	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՅՏՆՈՒՄ Է

—

ՔԵԱՆԱՐԱԳԵԱՁ. Ա«. Քոչ. Բոլոր համարները, յունվարի 1-ից ձեզ ուղարկված է։ Իսկ եթէ Պարսկաստանում պօստը անկարգ է և ուշ է հասցնում,—տարաբաղդաբար դրա դէմ մենք ոչինչ չենք կարող անել։

ՂԶԼԱՐ. Բ. Գ. Ձեր նամակը ուրախութեամբ կը տպէինք, եթէ հայերէն գրված լինէր։ Դուք ինքներդ պէտք է նեղութիւն կրէիք թարգմանել։

Կ. ՊՕԼԻՍ. ***. Ձեր յիշատակած թղթակցութիւնը արդէն ստացված է և տպագրված։

ԳԱՆՁԱԿ. Մ. Նարաթեանց։ Մատեաններից երևում է, որ Մ. Մարգարեանի անունով մի օրինակ «Մշակ» է ուղարկվում։ Միւս օրինակը ուղարկվում է Մէջլում Մարգարեանի անունով։ Եթէ դա մի և նոյն անձն է, բարեհաճեցէք հաղորդել, որ մ.կ օրինակը դադարեցրինք ուղարկել։

ԵԳԻՊՏՈՍ, Գահիրէ. Մ. Ան. Ձեր տուած երկու հասցէով ուղարկվում է «Մշակ»։ 10 ռուբլի յանձնեցինք «Մուրճի» խմբագրութեան։ Մնում է 1 ր. 60 կոպէկ, որը ձեր ցանկութեան համաձայն, կը յատկացնենք յոգուտ Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. Նարնգանգ։ Ձեր ուղարկած փողերից 10 ռուբլին յանձնեցինք «Տարազի» խմբագրութեան։ Երկու օրինակ «Մշակը» ուղարկվում է յունվարի 1-ից։ Իսկ ինչ վերաբերում է մնացած 8 ր. 90 կոպէկին, կարդացէք «Մշակի» անցեալ համարը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Լոյս տեսաւ

ՐԱՖՖԻ

„ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ“

Գինը 20 կոպ.

Գումարով առնողներին կը լինի 20% զիջում։ Ցանկացողները կարող են դիմել „Կովկասեան զրավաճառանոց“՝ պ. Զաքարեա Գրիգորեանին, և Հեղինակի այրիին։

(№ 11) 1—2

Ի նկատի ունենալով՝ թէ որքան օգտակար է ընթերցանութիւնը տարածել աշակերտների մէջ, ԽԱՆՔԵՆԴ աւանի հոգաբարձութիւնը մտադրվեց հիմնել մի փոքրիկ ԳՐԱԴԱՐԱՆ։ սակայն չունենալով դրա համար առանձին գումար՝ դիմում է հայ հեղինակներին ու թարգմանիչներին, որ իրանց գրքերից մի-մի օրինակ նուիրեն մեր դպրոցի նորակազմ գրադարանին։

Նուէրներ կարելի է ուղարկել այս հասցէով. Черезъ Шушу, въ урочище Ханъ-Кендіи. Аракелу Кочарянцу.

(№ 13) 1—4

„ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ“

ՎԷՊ Մ. ԽԱՏԻՍԵԱՆԻ

Գինն է 1 ռուբլի։

Ծախվում է կենտրոնական և խիղեկելի գրավաճառանոցներում։ (№ 13) 1—3

ՖԼՕՐԱ

Այգեգործական հիմնարկութիւն, նոր բացված

ՍԵՐՄԵՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(Միքայէլեան փողոց, № 159։ Տելեֆոն № 52)

Ստացված են թարմ սերմեր, թէ ծաղիկների և թէ բանջարանոցների։

Կատալոգը անմիջապէս ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Հասցէն, հեռագիրների և նամակների համար, ТИФЛИСЪ, ФЛОРА.

(№ 13) 1—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, փետրվարի 5-ին, Սօլօլակի ձրի և էժանագին ճաշարանի օգտին կը տրվի

ԿՕՆՑԷՐՏ

բարեհաճ մասնակցութեամբ տ.տ. Իշխ. Կ. Ֆ. Գուրամօվայի և Տ. Ն. Միրիմանօվայի և պ.պ. Մ. Տ. Վասիլիեվի, Դժիրալդօնիի, Վ. Ն. Պախոմօվի և վրաց խմբի Վ. Աբաշիձէ և Գ. Գեղեվանօվ դերասանների։

ԿՕՆՑԷՐՏԻՑ ՅԵՏՈՅ ԿԸ ԼԻՆԵՆ ՊԱՐԵՐ

Տոմսակները, գինը 4 ր. 10 կոպէկից մինչև 1 ր. 16 կոպէկ, նախապէս կարելի է ստանալ Ծատուրովի և Տէր-Սարգսեանի մագազիններում, Դվորցովայա փողոցի վրա, և Թիֆլիսի ժողովարանի շվեյցարի մօտ, իսկ կօնցէրտի օրը դահլիճի մուտքի մօտ։

Սկիզբը 8½ ժամին երեկոյեան։ 1—2

ԹԻԹԼԻՍԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՕՆ

Ուրբաթ, փետրվարի 3-ին, 1895 թ.

ԴԵՐԱՍԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, մասնակցութեամբ Հայ-դերասանական մշտական խմբի կը ներկայացնէ

„ՔԻՆ“

Դրամա 5 գործ. Հեղ Ալէք. Դիւմայի

Բեմի վրա բեմ ՄԱԿԲԷԹԻՑ

Քինի դերը կը կատարէ պ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

„ԷՍ ԷԼ ՔԻ ՄՕՅԻՐԼՈՒԹԻՒՆ“

Վոդեվիլ մէկ գործողութեամբ, հեղ. Տէր-Գրիգորեանի

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։ Տեղերի գինը սովորական է։ 2—2

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՌՈՍՍԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեայ պրէմիա 30 ր. 80 ճոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. դրամների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խոլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թ-ի «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թ-ի համար—12% է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։ (№ 85) 6—20

Նոյեմբերի 20-ից ստացվել է Պաստեօրի սիստեմով պատրաստած ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕՃՈՒԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։

Սերմը ստացված է ուղղակի յայտնի "Էկոնոմիաս„ ֆիրմայից։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻԶ, ԲԱԳՈՒ, եղբ. Մնացականեաններին, իսկ ՆՈՒԽԻ՝ Աղայ Մուսայ Մահմեդովին։

Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Батумъ կամ Тифлисъ կամ Ба .

(№ 136) (չ. ե.) 16—25

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ“ Ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօլոնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թ-ին։ (№ 151) 5—50

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Февраля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.